5.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՀՏԴ 342.8
DOI 10.56246/18294480-2022.12-37

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Գավառի պետական համալսարանի
և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս
էլփոստ՝ hranush.hranti@gmail.com
ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր
էլփոստ՝ ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացու ընտրվելու իրավունքի իրացման հիմնահարցերին: Ժողովրդաիշխանության պայմաններում ընտրություններն ունեն կարևոր քաղաքական և իրավական նշանակություն, քանի որ ընտրությունների միջոցով ժողովրդին պատկանող իշխանությունն իրականացվում է անմիջականորեն: Դրանք ժողովրդի կամքի բարձրագույն արտահայտությունն են՝ ուղղված պետական իշխանության ձևավորմանը: ՀՀ քաղաքացու ընտրվելու իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը, ուստի այդ իրավունքի պատշաճ իրականացումը պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունն է և պետք է ապահովվի արդյունավետ կառուցակարգերով: Հոդվածում քննարկվում են համամասնական, մեծամասնական և խառը ընտրակարգերի առանձ-

նահատկությունները, ներկայացվում նշված ընտրակարգերի կիրառման դեպքում քաղաքացիների ընտրվելու իրավունքի իրացման խնդիրները: Հեղինակներն եզրակացնում են, որ համամասնական ընտրակարգը չի նպաստում պասիվ ընտրական իրավունքի իրացմանը և առաջարկում են խառն ընտրական մոդելը որպես քաղաքացիների պասիվ ընտրական իրավունքի իրացման արդյունավետ համակարգ:

Բանալի բառեր՝ *ընտրական իրավունք, ժողովրդաիշխանություն, մեծամասնական ընտրակարգ, համամասնական ընտրակարգ, խառը ընտրական համակարգ, ակտիվ ընտրական իրավունք, պասիվ ընտրական իրավունք:*

Ժողովրդավարական, ազատական քաղաքական ռեժիմի պայմաններում պետությունն ապահովում է իրավական երաշխիքներ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պատշաճ կերպով իրականացնելու, ինքնադրսևորվելու, հանրային իշխանության իրականացմանը ընտրական համակարգի միջոցով մասնակցելու, ազատ տնտեսական գործունեություն ծավալելու և այլ ոլորտներում: Ժողովրդավարության անկյունաքարային արժեքներ են նաև քաղաքական, գաղափարախոսական բազմակարծությունը, մեծամասնության և փոքրամասնության շահերը հավասարապես հաշվի առնելը, փոխզիջումների միջոցով սոցիալական տարբեր հակասությունների հաղթահարումը, ազգային առանձնահատկությունների հաշվառումը և այլն: Ժողովրդավարական, ազատական պետական-իրավական ռեժիմը ժամանակակից իրավական պետության և քաղաքացիական հասարակության պայմաններում պետական իշխանության իրականացման ձև է, եղանակ և կարգ[1]:

Առանցքային է ընտրությունների դերը ժողովրդավարության հաստատման և ամրապնդման ճանապարհով ընթացող պետություններում: Ազատ ընտրություններն ու հանրաքվեներն այն հիմնական կառուցակարգերն են, որոնք հնարավորություն են տալիս ժողովրդին իրականացնելու սահմանադրորեն ամրագրված իրեն պատկանող իշխանությունը՝ ժողովրդաիշխանությունը: Պառլամենտարիզմի զարգացման և ժողովրդավարության խորացման հիմքը կազմում են ընտրությունները, ժողովրդավարական ներկա-

[1] Տե՛ս Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 154:

յացուցչությունը, ինչպես նաև պառլամենտական ժողովրդավարությունը: Օբյեկտիվ և օրինական ընտրությունների միջոցով ձևավորվում է լեգիտիմ ներկայացուցչական մարմին[2]: Ընտրությունը քաղաքական իշխանության ձևավորման հիմնական ուղին է և օրինական միջոցը՝ իշխող քաղաքական ուժերի փոփոխության համար: Պետության հիմնական խնդիրն է ընտրությունները կազմակերպել ազատ և անաչառ, խելամիտ պարբերականությամբ:

ՀՀ Սահմանադրության 2-րդ՝ անփոփոխելի հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների և հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»[3]:

Ժողովրդաիշխանություն հաստատվում է միայն ազատ և օրինական ընտրությունների ճանապարհով: ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական ակտերով ամրագրված և երաշխավորված է անձի ընտրական իրավունքը: Այսպես, ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 21-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իր երկրի կառավարմանը:

2. Յուրաքանչյուր ոք իր երկրում ունի պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը: Այդ կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և չկեղծված ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, փակ քվեարկության և կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ձևերի միջոցով»[4]:

---

[2] Տե՛ս Հրանուշ Հրանտի Հակոբյան, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան: «Տիգրան Մեծ», 2007, էջ 173:

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), 2015// https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

[4] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896

Ի թիվս այլ իրավունքների՝ յուրաքանչյուր քաղաքացու ընտրվելու իրավունքն է ամրագրում նաև «**Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը,** որում սահմանված է, որ յուրաքանչյուր քաղաքացի առանց որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների պետք է իրավունք և հնարավորություն ունենա մասնակցելու պետական գործերը վարելուն ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով, քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում և մտնել պետական ծառայության՝ ընդհանուր համահավասար պայմաններով[5]: Կարևոր իրավաքաղաքական նշանակություն ունեն քաղաքացիների թե՛ ընտրելու, թե՛ ընտրվելու, այսինքն՝ ակտիվ և պասիվ ընտրական իրավունքները: Քաղաքացու պասիվ ընտրական իրավունքը նրան տրված հնարավորությունն է՝ առաջադրվելու և ընտրվելու պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում: Իսկ ինչպիսի՞ ընտրակարգերի միջոցով է ժողովուրդն իրականացնում իրեն պատկանող իշխանությունը, ի՞նչ հնարավորություն է ընձեռված քաղաքացուն՝ իր ընտրելու, նաև ընտրվելու իրավունքն իրացնելու համար:

Աշխարհի տարբեր պետություններում կիրառվում են ընտրական համակարգի հետևյալ տեսակները՝

1. համամասնական կամ պրոպորցիոնալ,
2. մեծամասնական կամ մաժորիտար,
3. խառը:

Ընդհանուր առմամբ ընտրական երեք համակարգն էլ՝ համամասնական, մեծամասնական և խառը, ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Եվրոպական շատ երկրներում նախապատվությունը տրվել է համամասնական ընտրակարգին, որը կիրառվել է Բելգիայում, Ֆրանսիայում, ապա աստիճանաբար տարածում է գտել այլ պետություններում: Այսօր համամասնական ընտրակարգը կիրառվում է 217 երկրներից 86-ում, որը կազմում է պետությունների 39,6 տոկոսը: Այն գործում է Ավստրիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Դանիայում, Էստոնիայում, Իտալիայում, Իսպանիայում, Հունաստանում, Խորվաթիայում, Լատվիայում, Կիպրոսում, Չեխիայում, Նիդերլանդներում, Ռումինիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում և այլ երկրնե-

[5] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500

ում[6]: Բազմակուսակցական համակարգերի ներդրմամբ եվրոպական հասարակությունները սկսեցին տարբերակել գործող քաղաքական կուսակցությունների ծրագրերը, ծանոթանալ նրանց գաղափարներին և նպատակներին: Կուսակցություններն արտահայտում են հասարակության քաղաքական կամքը, հանդես գալիս որպես ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտներից մեկը: Փաստ է, որ կուսակցություններն ընտրությունների միջոցով են կայունանում: Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ ժողովրդի կամքը չի կարող ազատ դրսևորվել իշխանության օրենսդիր մարմնի ընտրության ժամանակ՝ առանց քաղաքական բազմաթիվ կուսակցությունների մրցակցության, որոնք ներկայացնում են հասարակական կարծիքի հիմնական ուղղությունները[7]:

1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագրի 9-րդ կետում ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է «բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն»[8], որն էլ հիմք դարձավ, որ 1991 թվականի փետրվարի 26-ին ընդունվի «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը[9]: «Հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամավոր հիմունքներով միավորված ՀՀ ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորում է, ունի ծրագիր և կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին»[10]: Նշված օրենքը դադարել է գործել, փոխարենը 2015թ. սահմանադրական փոփոխություններին համահունչ 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց նոր օրենք՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավար-

---

[6] Տե՛ս International IDEA, Electoral system for national legislature, https://www.idea.int/data-tools/questionview/130355

[7] Տե՛ս Арутюнян А. Свобода выражения мнения в контексте правопроменительной практики Европейского суда по правам человека // Конституционное правосудие в новом тысячелетии: Международный альманах, Ереван, 2003, с. 127-138.

[8] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1895

[9] Նշված օրենքն ուժը կորցրել է 2002 թվականի նոյեմբերի 15-ին:

[10] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=78

ման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է»[11]:

Բազմակուսակցական քաղաքական համակարգը թույլ է տալիս, որ կուսակցություններն ազատ ընտրությունների միջոցով ձեռք բերեն քաղաքական իշխանություն, ազդեցություն ունենան ժողովրդի քաղաքական կողմնորոշումների վրա, իրենց կառույցների օգնությամբ ակտիվ հետադարձ կապի մեջ լինեն ժողովրդի հետ: Կուսակցությունները հասարակության և պետության միջև յուրօրինակ կամուրջի դեր են ստանձնում և ընտրվելով օրենսդիր մարմնում՝ ստանում են կարևոր հասարակական հարաբերությունները կարգավորելու և ժողովրդի առջև ծառացած խնդիրները լուծելու հնարավորություն: Բազմակուսակցական համակարգը քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման անհրաժեշտ պայման է:

Գաղափարական հենքի վրա կուսակցությունների առաջացմանն ու ամրապնդմանը նպաստեց համամասնական ընտրակարգը, որի մասին փաստել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), այդ մասին կարելի է գտնել նաև Վենետիկի հանձնաժողովի 2002թ. Ուղենիշների II.1.ա բաժնում: Վենետիկի հանձնաժողովը դեռևս 2016 թվականին ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) նախագծի վերաբերյալ իր առաջին կարծիքում նշել է, որ համամասնական ընտրակարգերը նախատեսված են ներկայացուցչական խորհրդարան ստեղծելու համար[12]: Համամասնական ընտրակարգի պայմաններում պետությունն օրենսդրորեն սահմանում է ընտրողների համապատասխան քվե, որը ստանալու դեպքում միայն կուսակցությունները կարող են մանդատ ունենալ պառլամենտում: Այդ քվեն չպետք է շատ բարձր լինի, քանի որ ընտրողների որոշակի մաս զրկվում է պառլամենտում ներկայացուցիչ ունենալու հնարավորությունից: Բարձր տոկոսների սահմանումը խոչընդոտում է ընտրողների մեծաքանակ ներկայացուցչությանը պառլամենտում: Դրա ցայտուն վկայությունն է այն, որ եվրոպական շատ երկրներում սահմանվում է ձայնե-

[11] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=110534

[12] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի՝ ընտրական համակարգերի վերաբերյալ թիվ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile= CDL-PI(2019)001 զեկույց:

րի ցածր տոկոս: Օրինակ՝ Գերմանիայում սահմանվում է 4%, Իտալիայում՝ 3% և այլն, այսինքն՝ ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն պետք է ստանա առնվազն նշված քանակությամբ ձայներ, որպեսզի մասնակցի մանդատների բաշխմանը: Նման ‹‹ցածր›› տոկոսների սահմանումը նպաստում է պառլամենտում ընտրողների լայն շրջանակների ներկայացուցչության ապահովմանը, օրինակ՝ Չեխիայի խորհրդարանի 1990թ. ընտրություններում 4% նվազագույն շեմի նախատեսումը ընտրողների 18.5%-ին զրկեց ներկայացված լինելու իրավունքից[13]:

2015թ. փոփոխված ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով»: Սակայն ՀՀ Ազգային ժողովի 2017թ. ընտրությունները կազմակերպելիս Օրենսգիրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվեց համամասնական վարկանիշային ընտրական համակարգ, ըստ որի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) առաջադրում է թեկնածուների մեկ համապետական ընտրական ցուցակ, ապա այդ ցուցակից կազմում է տարածքային ընտրական ցուցակներ յուրաքանչյուր ընտրական տարածքի համար, այսինքն՝ ձևավորվում է ևս 13 տարածքային ընտրական ցուցակ: Նման ընտրակարգի պայմաններում Օրենսգիրքը սահմանում էր նաև համապետական և տարածքային ցուցակներով մանդատների բաշխման առանձնահատկությունները (95-րդ հոդված): Փաստորեն, հիմք ընդունելով սահմանադրական կարգավորումները, Ազգային ժողովի ընտրությունների համար Օրենսգրքով ներդրվեց համամասնական ընտրակարգ, միաժամանակ նախատեսվեց տարածքային ընտրական ցուցակներով ընտրություններին մասնակցելու կառուցակարգ: Այսպիսով, ձևավորվեց ոչ թե դասական համամասնական ընտրակարգ, այլ մեծամասնական ընտրակարգի տարրեր պարունակող համակարգ: Այս համակարգն իր առանձնահատկություններով, վարկանիշային ընտրակարգով հանդերձ, կիրառվեց օրենսդիր մարմնի 2017թ. հերթական և 2018թ. արտահերթ ընտրությունների ժամանակ: Նման համակարգը հնարավորություն էր տալիս ընտրողին իր վերաբերմունքը արտահայտելու թեկնածուների նկատմամբ, ձայն տալու նախընտրած թեկնածուին և փոխելու ցուցակների դասա-

[13] Մանրամասն տե՛ս Конституционное право зарубежных стран, Учебник, Т. 3, М., 1996, с. 641; Сборник избирательных законов стран Центральной и Восточной Европы, Киев, 1995, с. 121, 345; Տե՛ս նաև Зарубежное избирательное право: Учебное пособие, М., 2003:

վորությունը՝ բացառելով կուսակցության ղեկավարությունից ընտրվողի կախվածությունը: Այս դեպքում գործ ունենք ոչ թե «կոշտ» կամ «կարծր», այլ «ճկուն» կուսակցական ցուցակների հետ: Նման ընտրության դեպքում պատգամավորն իր թիկունքին ունի կոնկրետ ընտրողներ, և այսպիսի ճկուն կարգավորումը նրան հնարավորություն է տալիս ժողովրդի օգնությամբ որոշելու նաև իր դիրքը կուսակցության ներսում: Սակայն 2021թ. հունիսի 20-ին արտահերթ պառլամենտական ընտրություններն անցկացվեցին փոփոխված Օրենսգրքով, և ընտրությունները կազմակերպվեցին «մաքուր»՝ զուտ համամասնական ընտրակարգով, բացառելով վարկանիշային կառուցակարգը: Այս ընտրակարգին կողմ են քվեարկել և իրենց համաձայնությունը տվել պառլամենտում ներկայացված երեք քաղաքական ուժերն էլ: Մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից անցկացված հարցմանը, թե արդյո՞ք առկա է ընտրական համակարգը բարեփոխելու կարիք, հարցվածների 40%-ը միանշանակ դրական է պատասխանել, իսկ 34%-ը՝ մասամբ դրական: Հարցվածների 22%-ը լիովին համաձայնել է այն պնդմանը, որ անհրաժեշտ է քվեարկություն իրականացնել միայն կուսակցության օգտին, իսկ 22%-ն էլ համաձայնել է մասամբ[14]: Այս համակարգը հնարավորություն է տալիս, որ հասարակության մեջ գերիշխող հայացքներն ու գաղափարները համախմբված ձևով արտացոլվեն պառլամենտում, որը, անշուշտ, կարող է նպաստել հասարակության սոցիալական լարվածության թուլացմանը, քաղաքական կայունացմանը: Հատկապես խոշոր կուսակցությունները կարող են անաչառ կերպով կազմել նախընտրական ցուցակներ՝ հաշվի առնելով տարածքների ազգաբնակչության ներկայացվածությունը, կանանց, երիտասարդների որոշակի թվով ներկայացվածությունը, ազգային, կրոնական փոքրամասնությունների ընդգրկվածությունը և այլ գործոններ: Հարկ է նշել, որ հիմնականում այդ ընտրակարգի դեպքում է հնարավոր ձևավորել կայուն խորհրդարանական մեծամասնություն: Ընտրված կուսակցությունը կամ պառլամենտական կոալիցիան կարողանում են առանց հապաղելու ընտրել վարչապետ, ձևավորել կառավարություն: Հետագայում էլ պառլամենտական մեծամասնությունը կառավարության համար դառնում է ամուր հենարան, սատարում կառավարության գործունեությանը: Համամասնական ընտրակարգի կիրառման դեպքում.

[14] https://www.iri.org/sites/default/files/final_for_publication_armenia_electoral_reform_march_8_-2021.pdf.

1. պետությունում կազմակերպվում են միայն կուսակցական ընտրություններ,

2. կուսակցական ընտրությունները շատ դեպքերում կազմակերպվում են միամանդատ ընտրատարածքում (Հայաստան, Իսրայել),

3. պառլամենտում մանդատ ունենալու համար սահմանվում է ընտրողների նվազագույն ձայների քանակ,

4. առավել դյուրին է դառնում պառլամենտում մեծամասնություն ունենալը կամ կոալիցիա կազմելը: Այն նպաստում է կուսակցությունների կայացմանն ու հզորացմանը[15]:

Համամասնական ընտրակարգը պայմաններ է ստեղծում պառլամենտում թիմային աշխատանքների կազմակերպման, ծրագրերի իրականացման և որոշումների հստակ կայացման համար: Սակայն, ակնհայտ է և այն, որ համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները հիմնականում պատասխանատվություն են կրում իրենց կուսակցությունների առջև՝ «մոռանալով» ընտրողներին: Նման պայմաններում պառլամենտական ներքին աշխատանքները կազմակերպելիս օրենսդիր մարմնում ավելի շատ հենվում են կուսակցական խմբակցությունների և ոչ թե սահմանադրական մարմինների վրա (պատվիրակություններ կազմելը, հանձնաժողովի անդամ ընտրելը, գործուղումներ ուղարկելը, խմբակցության անունից ելույթ ունենալը): Հետևաբար առավել կարևորվում է խոշոր խմբակցություններ ունենալու հարցը[16]:

Համամասնական ընտրական համակարգն ունի նաև իր թերությունները.

1. թույլ է ընտրողների կապը ընտրյալների հետ, քանի որ իրենք ուղղակիորեն չեն ընտրել այդ անձանց,

2. համամասնական ցուցակի կազմը և դասավորվածությունը կախված է կուսակցական ղեկավարության կամքից,

3. որևէ կուսակցություն պառլամենտում մեծամասնություն չկազմելու դեպքում ձևավորվում է կոալիցիոն կառավարություն, որը, որպես կանոն, անկայուն է և հղի փլուզվելու վտանգով,

---

[15] Տե՛ս Հակոբյան Հ. Հ., Պառլամետը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, «Տիգրան Մեծ», Երևան, 2007, էջ 173:

[16] Նույն տեղում, էջ 175-176:

4. հաճախ մինչև պառլամենտի աշխատանքների սկիզբը որոշ թեկնածուներ, ում օգտին քվե են տվել ընտրողները, դուրս են գալիս ցուցակից, և պառլամենտում հայտնվում են ցուցակում նրան հաջորդող անձինք, ովքեր ժողովրդին քիչ հայտնի մարդիկ են, և ընտրողն իրեն հիասթափված է զգում,

5. խախտվում է հազարավոր անկուսակցական մարդկանց պասիվ ընտրական իրավունքը՝ ընտրվելու իրավունքը, քանի որ կուսակցությունների ղեկավարներն այդքան էլ հակված չեն անկուսակցականներին ընդգրկելու իրենց ցուցակներում, այն էլ անցողիկ տեղերում,

6. չկարգավորված ու վիճելի է մնում այն իրավիճակը, երբ պատգամավորը դուրս է գալիս խմբակցությունից և վայր չի դնում մանդատը,

7. ժողովրդավարության զարգացման ցածր աստիճան ունեցող երկրներում, որտեղ կուսակցական համակարգը չի կայունացել, ընտրությունների նախաշեմին «սնկի պես» աճում են կուսակցությունները, քանի որ հավակնորդ դառնալու և առաջադրվելու հնարավորություն տրվում է միայն կուսակցությունների միջոցով, որի հետևանքով բազմաթիվ նորաստեղծ կուսակցությունները ընտրողների շրջանում ստեղծում են խառնաշփոթ և անհասկանալի իրավիճակ: Այս ամենով հանդերձ՝ արևմտյան շատ երկրներում հետևյալ միտումն է նկատվում. եվրոպական իրավաքաղաքական միտքն այժմ համամասնական ընտրակարգը փորձում է փոխել մեծամասնականով, այսինքն՝ երկիրը բաժանել պառլամենտի տեղերի քանակին հավասար ընտրատարածքների, որտեղ կառաջադրվեն ու կմրցեն անհատ թեկնածուները:

Մինչ 1995թ.-ն ՀՀ-ում գործում էր զուտ մեծամասնական ընտրական համակարգ, որի պարագայում երկիրը բաժանվում էր ընտրական տարածքների, ընտրություններին մասնակցում և մրցում էին անհատներ, և հաղթող էր ճանաչվում այն թեկնածուն, ով հավաքել էր ընտրողների ձայների հարաբերական մեծամասնությունը, այսինքն՝ ավելի շատ քվե: Եթե դիտարկենք ԱՄՆ կոնգրեսի ընտրությունները, որոնք հարյուրավոր տարիներ շարունակ կազմակերպվում են մեծամասնական համակարգով, ապա ակնհայտ է, որ երկկուսակցական կայուն համակարգի պայմաններում, երբ ընտրվողները նախօրոք հայտարարում են իրենց կուսակցական կողմնորոշման մասին, որպես կանոն, պառլամենտ ընտրվում են հանրապետական և դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները: Թեև նրանք ընտրվում են մեծամասնական համակարգով, բայց ներդրված կառուցակարգերը հնարավորություն են տալիս ԱՄՆ կոնգրեսում դրսևորել հստակ կուսակցական մո-

տեցումներ: Այս ընտրակարգն ընդունելի է, քանի որ ընտրողը ճանաչում է իր ընտրած պառլամենտականին, գիտի՝ որ դեպքում ինչպիսի հարցեր կարող է բարձրացնել իր իսկ կողմից ընտրված պառլամենտականի առջև, մյուս կողմից էլ կուսակցական սկզբունքներ են գործում կոնգրեսում:

Մեծամասնական ընտրակարգի դեպքում պատգամավորը կրում է անձնական պատասխանատվություն իր ընտրողների առջև, լինում է ընտրատարածքում, բարձրաձայնում բնակչությանը հուզող շատ ու շատ հարցեր: Ընտրողը ճանաչում է իր ներկայացուցչին և հաճախ նրա առջև հարցեր բարձրացնում: Մեծամասնական ընտրակարգն էապես նպաստում է ժողովրդավարական սկզբունքների արմատավորմանը, ընտրող-պատգամավոր կապի ամրապնդմանը, ներկայացուցիչների պատասխանատվության բարձրացմանը:

Մեծամասնական ընտրական համակարգի կարևոր առավելություններից է և այն, որ այն հեշտ ընկալելի և պարզագույնն է ընտրողների համար: Մյուս կողմից, մեծ և փոքր կուսակցությունները՝ ի դեմս կոնկրետ անհատների, կարող են իրենց ներկայացուցիչն ունենալ պառլամենտում: Հեղինակություն և վստահություն չվայելող մարդիկ հիմնականում չեն կարող հայտնվել պառլամենտում: Պահպանվում է տարածաշրջանից պառլամենտում ներկայացուցիչներ ունենալու սկզբունքը:

«Այս համակարգի թերությունն այն է, որ երկու և ավելի թեկնածուի առկայության դեպքում ընտրված պատգամավորը չի ներկայացնում տվյալ տարածքի ընտրողների մեծամասնությանը, և արդյունքում հաճախ մեծամասնությունը չի ունենում իր ներկայացուցիչը պառլամենտում»[17]: Փաստորեն, մեծամասնական ընտրական համակարգի թերություններից է և այն, որ չընտրված թեկնածուի ձայները «կորչում» են:

Պետք է ընդգծել, որ ժողովրդավարության զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում մեծամասնական ընտրակարգով ընտրությունները կարող են հանգեցնել անկախատեսելի հետևանքների, երբ որևէ կերպ հնարավոր չլինի մեծամասնություն ձևավորել պառլամենտում: Այս համակարգի դեպքում մի կողմից՝ շատ պառլամենտականներ կարող են կենտրոնանալ ներքին խնդիրների վրա՝ ուշադրությունից դուրս թողնելով պետությանը սպառնացող արտաքին լուրջ հիմնախնդիրներն ու մարտահրավերները, իսկ

[17] Տե՛ս Чиркин В. Е. Конституционное право зарубежных стран, Учебник, М., 1999, с. 33; Государственный строй США, М., 2000, с. 78.

մյուս կողմից՝ կարող է խիստ դժվարանալ վարչապետի ընտրությունը և կառավարության կազմավորվումը:

Այս համակարգի պայմաններում մեծանում է պառլամենտ գործարարների մուտքի հնարավորությունը, որոնց մի մասը, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, նաև իրավախախտումներով է հայտնվում պառլամետում, ինչպես նաև գործարար աշխարհը հեշտությամբ է «համագործակցում» անհատ պատգամավորների հետ, ինչը իրավական պետության կառուցման ճանապարհին կարող է ունենալ ոչ ցանկալի հետևանքներ:

Կիրառվում է նաև խառը ընտրական համակարգը, որի ժամանակ զուգակցվում են համամասնական և մեծամասնական ընտրական համակարգերը, և նախօրոք մանդատները բաժանվում են մեծամասնական և համամասնական համակարգերի միջև, օրինակ՝ Գերմանիան, Ուկրաինան, Նոր Զելանդիան, Մեքսիկան նախընտրում են խառը ընտրական համակարգը[18]:

Եթե Հայաստանում 1995թ.-ին պառլամենտի 20%-ի ընտրությունն էր կազմակերպվում համամասնական ընտրակարգով, իսկ 80%-ը՝ մեծամասնական, ապա պառլամենտի հետագա ընտրությունների ժամանակ կուսակցությունների դերը մեծացնելու, նրանց պառլամենտական ընտրապայքարին պատրաստելու, պառլամենտում նրանց թիմային աշխատանքին նպաստելու և կայուն քաղաքական համակարգ ունենալու համար աստիճանաբար պատգամավորական տեղերը բաշխվեցին հօգուտ համամասնական ընտրակարգի՝ օրենսդիր մարմնի 131 տեղերից 90-ը հատկացնելով կուսակցություններին և միայն 41-ը՝ մեծամասնականին:

Յուրաքանչյուր քիչ թե շատ կայացած կուսակցություն ընտրությունների միջոցով ձգտելու է մեծամասնություն կազմել պառլամենտում և իր անմիջական ազդեցությունն ունենալ կառավարության ձևավորման գործում, իսկ մեծամասնություն չունենալու դեպքում ծառանում է այն հարցը, թե որ կուսակցություններն են միավորվելու և կոալիցիա կազմելու: Գերմանիայում խառը ընտրական համակարգը կիրառվում է Բունդեսթագի ընտրություններում. պատգամավորների կեսն ընտրվում է միամանդատ ընտրատարածքում, որը ներառում է պետության ողջ տարածքը՝ հարաբերական մեծամասնության համակարգի կիրառմամբ, իսկ մյուս կեսն ընտրվում է դաշնային սուբյեկտ-

[18] Վենետիկի հանձնաժողովի՝ ընտրական համակարգերի վերաբերյալ թիվ CDL-PI(2019)001 զեկույց, 18.03.2019թ.: International IDEA, Electoral system for national legislature, https://www.idea.int/datatools/question-view/130355.

ների կողմից, որոնք բազմամանդատ ընտրատարածքներ են, համամասնական ընտրահամակարգի կիրառմամբ կուսակցությունների ներկայացրած ցուցակներին համապատասխան[19]: Խառը ընտրական համակարգի առավելությունն այն է, որ որոշակի հավասարակշռություն է ստեղծվում համամասնական և մեծամասնական ընտրակարգերի միջև:

Խառը ընտրական համակարգով ընտրություն անցկացնելիս՝

1. կիրառվում են և՛ համամասնական, և՛ մեծամասնական ընտրակարգերն իրենց առավելություններով և թերություններով,

2. համամասնական ընտրակարգով պառլամենտ ընտրվելու նվազագույն շեմը չհաղթահարած կուսակցության ներկայացուցիչները հնարավորություն են ունենում ընտրվելու մեծամասնական ընտրակարգով,

3. ընտրողը հնարավորություն է ունենում ընտրելու հենց իր նախընտրած թեկնածուին և ունենալու իր տարածքի պատգամավոր,

4. անհատ թեկնածուից բացի, ընտրողը կարողանում է իր քվեն տալ որևէ կուսակցության և նրա ծրագրին՝ դրանով իսկ ընտրելով նաև երկրի զարգացմանն ուղղված իր համար ընդունելի տեսլականը,

5. չի խախտվում որևէ քաղաքացու ոչ ակտիվ և ոչ էլ պասիվ ընտրական իրավունքը:

Միաժամանակ, խառը ընտրակարգի թերությունն այն է, որ պառլամենտում կարող են ընտրվել անկուսակցականներ, որոնք պառլամենտ անցած որևէ կուսակցության գաղափարները չեն կիսում կամ քաղաքական ուժերի միջև պաշտոնների բաշխման գործընթացում որևէ դեր չեն ունենում, իհարկե, եթե պատգամավորական խմբեր չեն կազմավորում: Նման իրավիճակից խուսափելու համար կարելի է Օրենսգրքում նորմ սահմանել, ըստ որի՝ անկուսակցականները որպես թեկնածու գրանցվելիս պարտավորվեն նշել, թե որ կուսակցության գաղափարներին են հարում: Կարող ենք որպես թերություն նշել և այն, որ պառլամենտում ձևավորվում է պատգամավորների երկու շերտ՝ պատգամավորներ, որոնք ընտրվել են կուսակցությունների ցուցակներով և առավել հաշվետու են խմբակցություններին և պատգամավորներ, որոնք ընտրված են մեծամասնական կարգով և ունեն ընտրողների լուրջ զանգված:

---

[19] Մանրամասն տե՛ս Хессе К. Государственное право ФРГ, М., 1988, с. 64; Кирххоф П., Изензе Й. Государственное право Германии, Т. 1, М., 1994.

Այսպիսով, կարելի է նշել յուրաքանչյուր ընտրական համակարգի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը, ուստի հստակորեն պատասխանել այն հարցին, թե որ ընտրակարգն է կատարյալ կամ անթերի՝ անհնարին է: Փաստ է, որ ընտրական համակարգի կիրառումը կախված է տվյալ պետության քաղաքական իշխանության կամքից՝ հաշվի առնելով ընտրողների ցանկություններն ու ձևավորված ավանդույթները: Հետևաբար պետությունը պարտավոր է պայմաններ ստեղծել, որպեսզի ընտրողները հնարավորություն ունենան ազատ և ուղղակի ընտրական իրավունքի միջոցով արտահայտելու իրենց կամքը՝ բացառելով անօրինականություններն ու ընտրակեղծիքները, ապահովելով ընտրության սահմանադրական սկզբունքները և մարդու իրավունքներն ու ազատությունները: Ընտրությունները նաև յուրօրինակ չափանիշ են՝ գնահատելու պետության մեջ ժողովրդավարական գործընթացների մակարդակը, բազմակարծության առկայությունը, բազմակուսակցական համակարգի գործունեության արդյունավետությունը:

Ընդհանրապես պետության կողմից ընտրական համակարգը ընտրելիս պետք է հաշվի առնել բոլոր քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը: Այն պետք է արտահայտի ժողովրդի կամքը և արժանանա ժողովրդի լիակատար վստահությանը: Այդ առիթով Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ ընտրական համակարգը պետք է արտացոլի ժողովրդի կամքը, այլ կերպ ասած՝ մարդիկ պետք է վստահեն ընտրված համակարգին և դրա ներդրմանը[20]: Միջազգային իրավական ակտերին համահունչ՝ ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված են ընտրական իրավունքի սկզբունքները՝ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունք՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ ՀՀ ընտրական օրենսգիրքը դրանց հիման վրա սահմանում է ընտրական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերը: Օրենսգրքի 3-րդ հոդվածում ամրագրված է, որ

«1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

2. Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

---

[20] Տե՛ս https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)019-e, պարբ. 27:

3. Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն»[21]:

Այսինքն՝ միջազգային իրավական փաստաթղթերով, ՀՀ Սահմանադրությամբ և Օրենսգրքով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունք ունի առանց որևէ խտրականության, սակայն համամասնական ընտրակարգը կիրառելիս խախտվում է շատերի **ընտրվելու** իրավունքը: Պասիվ ընտրական իրավունքի իրացման համար, որպես կանոն, ավելի բարձր տարիք է սահմանվում, քան ակտիվ իրավունքի սուբյեկտների համար, որպեսզի ընտրված անձանց աշխատանքային փորձը և գիտելիքներն օգտակար լինեն պետության համար կարևորագույն որոշումներ ընդունելիս, պետության զարգացման ուղին ու հեռանկարը կանխորոշելիս, արդյունավետ օրենքներ ընդունելիս: Այդ է պատճառը, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ի տարբերություն ակտիվ ընտրական իրավունքի՝ պասիվ ընտրական իրավունքից կարող են օգտվել սահմանափակ թվով մարդիկ, քանի որ ընտրվողը պետք է բավարարի մի շարք պարտադիր պահանջների՝ ցենզերի: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ինչպես նաև նույն հոդվածի 4-րդ մասում սահմանված է ընտրելու և ընտրվելու իրավունք չունեցող անձանց շրջանակը. ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք[22]: Սահմանված պահանջներին բավարարող անձն իրավունք ունի որպես թեկնածու գրանցվելու, այլ թեկնածունե-

[21] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=105967

[22] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), Երևան, 2015 // https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

րի հետ իրավահավասար կերպով նախընտրական քարոզչություն անցկացնելու, ինչպես նաև թեկնածուի՝ օրենքով վերապահված մյուս բոլոր իրավունքներն իրացնելու համար: Սակայն համամասնական ընտրական համակարգ կիրառելիս՝ ընտրություններն անցկացվում են միայն կուսակցական ցուցակներով, և ընտրողներն իրենց ձայնը տալիս են առանձին կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների, այսինքն՝ բոլոր քաղաքացիների ընտրվելու իրավունքը չի իրացվում, եթե հատկապես նրանք անկուսակցականներ են: Դրա հետևանքով համամասնական ընտրակարգը կիրառելու դեպքում քաղաքացուն տրված կարևորագույն քաղաքական իրավունքը նա չի կարողանում իրացնել: Այս դեպքում միջազգային իրավական փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմնարար սկզբունքը, ըստ որի յուրաքանչյուր ոք ընտրելու և ընտրվելու իրավունք ունի, ինչպես նաև առանց որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների պետք է իրավունք ունենա անմիջականորեն մասնակցելու պետական գործերը վարելուն, իր երկրի կառավարմանը, դառնում է անհնարին: Այսպիսով, խախտվում է.

1. քաղաքացու հիմնական քաղաքական իրավունքներից մեկը՝ պասիվ ընտրական իրավունքը, ոտնահարվում նրա իրացման հնարավորությունը, քանի որ. ա/ եթե կուսակցության ղեկավարը նպատակահարմար չի գտնում տվյալ անձի թեկնածությունը ներառել կուսակցության նախընտրական ցուցակներում, ապա անձը այլևս չի կարող առաջադրվել,

բ/ եթե տվյալ կուսակցությունը չի մասնակցում ընտրություններին, ապա նրա անդամները ևս զրկվում են իրենց պասիվ ընտրական իրավունքի իրացումից,

գ/ եթե անձն անկուսակցական է, և որևէ կուսակցություն տվյալ անձին չի ընդգրկում իր նախընտրական ցուցակներում, ապա քաղաքացին չի կարող անմիջականորեն մասնակցել իր երկրի կառավարմանը,

2. հակասություն է առաջանում միջազգային իրավական նորմերի հետ, քանի որ ոչ բոլորը կարող են օգտվել իրենց իսկ իրավունքներից,

3. պետությունում ձևավորվում է քաղաքացիների երկու սոցիալական խումբ, որոնցից մեկն ունի պակաս իրավունքներ, քան մյուս խումբը, ինչը խտրականության դրսևորում է,

4. հնարավոր է, որ կարող, հասարակության մեջ բարձր հեղինակություն և վստահություն վայելող շատ անհատներ դուրս մնան ընտրական պայքարից:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ քաղաքացիների քաղաքական իրավունքների խախտումները, խտրականությունը, կուսակցական «դիկտատուրան» բացառելու համար ընտրական համակարգերից նպատակահարմար ենք գտնում խառը ընտրակարգը՝ որպես նախընտրելի տարբերակ, որի դեպքում հնարավորություն է ստեղծվում ընտրողներին իրենց վերաբերմունքն արտահայտելու ինչպես կուսակցությունների, այնպես էլ առանձին թեկնածուների նկատմամբ, և չի խախտվում որևէ անձի իրավունք: Պասիվ ընտրական իրավունքից օգտվելու համար նախ անհրաժեշտ է, որ անձն ունենա ակտիվ ընտրական իրավունք, ապա նաև բավարարի ընտրվելու իրավունքի համար նախատեսված պահանջներին՝ սահմանված կարգով իրացնելով իր պասիվ ընտրական իրավունքը: Ընտրությունն է այն կառուցակարգը, որի միջոցով պարբերաբար որոշվում է քաղաքական ուժերի նկատմամբ հանրային վստահության աստիճանը, բացահայտվում քաղաքացիների քաղաքական կամքը, ժողովուրդը մասնակից է դառնում քաղաքական գործընթացներին, ընտրվում է նոր քաղաքական ղեկավարություն՝ նոր ծրագրերով, հետևաբար պետությունը պետք է ստեղծի բոլոր պայմանները յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքներն արդյունավետ կերպով իրացնելու համար:

ISSUES OF EXERCISING THE RIGHT TO VOTE (SUFFRAGE) OF A CITIZEN OF THE REPUBLIC OF ARMENIA

HAKOBYAN HRANUSH
Doctor of Law, Professor,
Lecturer at Gavar State University and Academy of State Administration of the Republic of Armenia
e-mail: hranush.hranti@gmail.com
HAKOBYAN RUZANNA
Doctor of Law, Associate Professor,
Rector of Gavar State University
e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

The article is dedicated to the issues of exercising the right to vote of a citizen of the Republic of Armenia. In a democracy, elections have a significant political and legal significance, as through elections, power belonging to the people is exercised directly. They are the highest expression of the will of people, aimed at the

formation of state power. The right to vote of a citizen of the Republic of Armenia is enshrined in the Constitution of the Republic of Armenia and ratified by instruments of international human rights to which the Republic of Armenia has acceded, thus the proper exercise of that right is a positive constitutional responsibility of the state and it must be ensured by effective structures. The authors discuss the peculiarities of proportional, majoritarian and mixed electoral systems, present the problems of exercising the right of citizens to vote in case of application of the mentioned electoral systems, and conclude that the proportional electoral system does not contribute to the exercise of passive suffrage by proposing a mixed electoral model as an effective system for exercising the passive suffrage of citizens.

Keywords: *right to vote (suffrage), democracy, majoritarian electoral system, proportional electoral system, mixed electoral system, active suffrage, passive suffrage.*

ПРОБЛЕМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПАССИВНОГО ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА ГРАЖДАНИНА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АКОБЯН ГРАНУШ
Доктор юридических наук, профессор,
Преподаватель Гаварского государственного университета
и Академии государственного управления РА
электронная почта: hranush.hranti@gmail.com
АКОБЯН РУЗАННА
Доктор юридических наук, доцент,
Ректор Гаварского государственного университета
электронная почта: ruzanna.hakobyan@mail.ru

Статья посвящена проблемам реализации пассивного избирательного права гражданина Республики Армения. В условиях демократии выборы имеют большое политическое и правовое значение, так как посредством выборов непосредственно осуществляется власть, принадлежащая народу. Они являются высшим выражением воли народа, направленной на формирование государственной власти. Избирательное право гражданина закреплено в Конституции РА, а также ратифицировано международными актами по правам человека, к которым присоединилась Республика Армения, поэтому надлежащее осуществление этого права является позитивной конституционной ответственностью

государства и должна быть обеспечена эффективными механизмами. Авторы представляют особенности пропорциональной, мажоритарной, смешанной избирательных систем, обсуждают проблемы реализации избирательного права граждан в случае применения указанных избирательных систем и делают вывод о том, что пропорциональная избирательная система не способствует реализации пассивного избирательного права, предлагая смешанную избирательную модель в качестве эффективной системы реализации пассивного избирательного права граждан.

Ключевые слова: *избирательное право, демократия, мажоритарная избирательная система, пропорциональная избирательная система, смешанная избирательная система, активное избирательное право, пассивное избирательное право.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.05.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 19.05.2022թ.: